«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» 01 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի պետի ժ/պ
Հ. Թունյան

Ն ԳԲԽ 49/13 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» կողմից 28.12.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. Ա/Ձ Անուշ Պետրոսյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» հայտնել է, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ

կնքել է շրջանակային համաձայնագիր և «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2013թ. դեկտեմբերի 5-ին սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ընթացակարգի հրավերին կից գնային առաջարկով սահմանվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ծառայության միավորի գնով:

Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» վերը նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով ներկայացրել է առաջարկվող ծառայության միավորի գինը՝ 275.000 ՀՀ դրամ:

«ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» գնային առաջարկով ներկայացված 275.000 ՀՀ դրամը դիտարկվել է որպես պայմանագրի կատարման ընդհանուր գին և առաջարկվել է կնքել պայմանագիր նշված 275.000 ՀՀ դրամով:

Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից հայտով գնման ենթակա ծառայությունների համար գնային առաջարկով ընկերության կողմից ներկայացված գինը պետք է դիտարկվեր որպես միավորի գին, քանի որ հրավերով պահանջվել է ծառայության միավորի գին, իսկ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված այն դրույթը, որ առաջարկվող գինն անհրաժեշտ է ներկայացնել ծառայության միավորի գնով հակասում է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 56-րդ կետի պահանջներին, քանի որ նշված կետով սահմանված է, որ գնային առաջարկը ներկայացվում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Բացի այդ, «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով հստակ չեն սահմանվել ձեռքբերման ենթակա ծառայությունների բնութագրերը՝ մասնավորապես տեխնիկական բնութագրում նշվել է, որ անհրաժեշտ է ապահովել առնվազն 270 համակարգիչների, 120 տպիչ սարքերի, 192 անխափան ստուգման սարքերի, 26 սկաներների և այլն, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածին, քանի որ նշված հոդվածով

սահմանվել է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» գտնում է, որ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 56-րդ կետը՝ խնդրելով չեղյալ համարել «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.01.2013թ. N 04/032-1 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.12.2013թ. «Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ առողջապահության նախարարությունը 13.01.2014թ. N ՍՔ/ԾԳ/71-14 գրությամբ Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ գնման հայտով սահմանվել է «միավոր ծառայությունը», որպես լրակազմ, որն իր մեջ ընդգրկում է 2014թ. համար ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի սպասարկման ծառայություններ, որոնք տեսակներով և քանակներով մանրամասն նկարագրված են տեխնիկական բնութագրում, իսկ Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» գնային առաջարկն ընդունվել է որպես ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի սպասարկման ծառայության ընդհանուր գին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 168-Ն որոշման 56-րդ կետը՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Ելնելով վերոգրյալից ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համապատասխան:

3. ԳԲԽ-49/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-49/13 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ նաև Կենտրոն) ուսումնասիրելով Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» կողմից 28.12.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 18.12.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 13.01.2014թ. N ՍՔ/ԾԳ/71-14 գրությունը և գրությամբ ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ առողջապահության նախարարության կողմից սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը»:

1. Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» Կենտրոնին 28.12.2013թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ծառայության միավորի գնով, սակայն Ընթացակարգին մասնակցելու նպատակով գնային առաջարկում «Անուշ Պետրոսյանը» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծառայության միավորի գինը, որը կազմել է 275.000 ՀՀ դրամ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես պայմանագրի կատարման ընդհանուր գին և առաջարկվել է կնքել պայմանագիր նշված 275.000 ՀՀ դրամով:

Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» գտնում է, որ Հանձնաժողովը գնման ենթակա ծառայությունների համար «Անուշ Պետրոսյանը» Ա/Ձ-ի կողմից գնային առաջարկով

ներկայացված գինը պետք է դիտարկեր որպես միավորի գին, քանի որ հրավերով պահանջվել է ծառայության միավորի գինը, իսկ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված այն դրույթը, որ առաջարկվող գինն անհրաժեշտ է ներկայացնել ծառայության միավորի գնով, հակասում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի պահանջներին:

ՀՀ առողջապահության նախարարությունը 13.01.2014թ. Կենտրոնին ներկայացրած N ԱՔ/ԾԳ/71-14 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է «միավոր ծառայությունը», որպես լրակազմ, որն իր մեջ ընդգրկում է 2014թ. համար ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի սպասարկման ծառայություններ, որոնք տեսակներով և քանակներով մանրամասն նկարագրված են տեխնիկական բնութագրում, իսկ Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» գնային առաջարկն ընդունվել է որպես ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի սպասարկման ծառայության ընդհանուր գին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ 56-րդ կետը:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված 2014 թվականի գնման պլանով գնման ենթակա ծառայությունների թիվ 50116100 միջանցիկ կոդով նախատեսված գրասենյակային մեքենաների և սարքավորանքի նորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մասով գնման ձև է սահմանվել ՇՀ-ն, չափի միավոր՝ դրամ, իսկ քանակը՝ մեկ:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերին (ծանուցմանը) կից գնային առաջարկով սահմանվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով՝ ապրանքի անվանումը, ինքնարժեքի հաշվարկ՝ արժեք, ԱԱՀ, առաջարկված գինը միավորի համար՝ տառերով և թվերով:

Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է

պայմանագիրը կատարել հետևյալ գների համաձայն՝ ինքնարժեք 275.000 ՀՀ դրամ, առաջարկված գինը՝ 275.000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 18.12.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը որոշում է կայացրել 275.000 ՀՀ դրամ գնային առաջարկով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ «Անուշ Պետրոսյանին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից հաշված մինչև մեկ, իսկ ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում:

Գտնում ենք, որ թեև ՀՀ առողջապահության նախարարության կողմից սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով (ծանուցմամբ) Պատվիրատուի կողմից սահմանվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել պահանջվող ծառայության մեկ միավորի արժեքով, այնուամենայնիվ գնահատող հանձնաժողովը Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» կողմից գնային առաջարկով ներկայացված 275.000 ՀՀ դրամը գնահատելով որպես պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գին գործել է Կարգի 56-րդ կետով սահմանված պահանջների պահպանմամբ, քանի որ գնման ենթակա ծառայությունը Ընթացակարգի հրավերով սահմանվել է որպես մեկ լրակազմ և ներկայացվել է մեկ չափաբաժնով:

Գտնում ենք, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

2. Ա/Ձ «Անուշ Պետրոսյանը» Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով հստակ չեն սահմանվել ձեռքբերման ենթակա ծառայությունների բնութագրերը՝ մասնավորապես տեխնիկական բնութագրում նշվել է, որ անհրաժեշտ է ապահովել առնվազն 270 համակարգիչների, 120 տպիչ սարքերի, 192 անխափան ստուգման սարքերի, 26 սկաներների և այլնի սպասարկում, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդածի պահանջները:

Պատվիրատուն 13.01.2014թ. Կենտրոնին ներկայացրած N ՍՔ/ԾԳ/71-14 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում տեսակներով և քանակներով մանրամասն նկարագրված են ձեռքբերման ենթակա ծառայությունների բնութագրերը:

«ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության, ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության և ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության շենքերում, գտնվող հանգույցների և սարքավորումների տեխնիկական շահագործման, տեղադրման և սպասարկման համար անհրաժեշտ է ապահովել և սպասարկել անխափան աշխատանք՝ առնվազն 270 համակարգիչների, 120 տպիչ սարքերի, 192 անխափան սնուցման սարքերի, 26 սկաններների, 9 պատճենահանման սարքերի, 7 ip տեսախցիկների, 17 սերվերների համար, ինչպես նաև տպիչ սարքերի ամենօրյա սպասարկում, վերալիցքավորում և վերանորոգում ըստ պահանջի: Նշված աշխատանքները պետք է ապահովեն ընդհանուր համակարգի անխափան աշխատանքը, այդ թվում՝ նշված կազմակերպություններում գործող ներքին մալուխային և անլար համակարգչային ցանցի անխափան աշխատանքը ու նոր համակարգիչներ ավելանալու դեպքում համակարգչի միացումը ընդհանուր գործող ցանցին և նրա հետագա սպասարկումը: Խափանված համակարգչային սարքերի վերանորոգում և փոխարինում ըստ անհրաժեշտության իր իսկ միջոցների հաշվին, ինչպես նաև մասնագետի տեխնիկական աջակցության նախարարության ներկայացումը ցանկացած ներքին և

արտագնա միջոցառումներում: Նշված աշխատանքները պետք է կատարվեն՝ խափանված համակարգիչների վերանորոգումը և այլ տեխնիկական գործերը ոչ ավելի քան 24 ժամում, իսկ քարթրիջների լիցքավորումը՝ ոչ ավել քան 4 ժամվա ընթացքում: Նշվել է նաև, որ անհրաժեշտ է համապատասխան առնվազն երկու մասնագետների ամենօրյա (09:00-18:00) առկայությունը, իսկ արտաժամայինը՝ ըստ պահանջի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

«ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի տեխնիկական բնութագրում առնվազն բառի սահմանմամբ ամբողջությամբ և հստակ չեն նկարագրվել ձեռքբերման ենթակա ծառայության հատկանիշները, ինչը կարող է հանգեցնել այլընտրանքային մեկնաբանության:

Գտնում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագիրը չի բխում Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջներից, քանի որ Պատվիրատուի կողմից հստակ չեն նշվել այն ապրանքատեսակների և ծառայությունների քանակները և կատարման ժամկետները, որոնք հանդիսանում են տվյալ ընթացակարգի գնման առարկան:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ առաջարկում ենք Ա/Ձ «Անուշ Պետրոսյանի» կողմից 28.12.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/9-2014/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Է. Սարգսյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի պետ Ա. Հակոբյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-49/13 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար Ռ. Մկրտչյան